## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻՆ ՏՎԱԾ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հունիսի 29-ից մինչև հուլիսի 2-ը հովվապետական այցելություն տվեց Շիրակի թեմին:

Նորին Վեհափառությանն ուղեկցում էին գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոսը, Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը և Մայր Աթոռի միաբաններ Տ. Մեսրոպ վարդապետը և գավազանակիր Տ. Արսեն աբեղան:

Լենինականի երկաթուղային կայարանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին թեմի քահանայից դասը, թեմական խորհրդի անդամները և հավատացյալների խուռն բազմություն՝ թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Մաշտոց եպիսկոպոսի գլխավորությամբ, ինչպես և Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Սուրեն Հովհաննիսյանը և Լենինականի քաղաքային սովետի նախագահի տեղակալ Հ. Հովհաննիսյանը:

Նորին Սրբությունը կիրակի, հունիսի 30-ին, Լենինականի Ս. Աստվածածին Մայր Եկեղեցում մատուցեց սուրբ պատարագ և քարոզեց ի ներկայության խուռներամ հավատացյալ ժողովրդի:

Հուլիսի 1-ին Նորին Ս. Օծությունն Իր շքախմբով այցելեց Մարմաշենի պատմական վանքը և ապա Լենինականի գուլպայի գործարանը: Նույն օրը Վեհափառ Հայրապետը այցելություն տվեց Լենինականի քաղաքային սովետին, ուր ընդունվեց քաղաքային սովետի ղեկավար ամբողջ կազմի կողմից՝ նախագահ Ս. Մատնիշյանի գլխավորությամբ: Տեղի ունեցավ բարեկամական ջերմ զրույց և հյուրասիրություն:

Նույն օրը Նորին Սրբությունը մեկնեց Կիրովական և երեկոյան տեղի Ս. Աստվածածին եկեղեցում նախագահեց ժամերգության: Հոծ բազմության ներկայության Վեհափառը խոսեց հավատացյալ ժողովրդին և տվեց Իր պատգամը:

Հուլիսի 2-ին, Նորին Ս. Օծությունը այցելեց Կիրովականի նորակառույց արհեստական մետաքսաթելի գործարանը և արհեստական զարդաքարերի գործարանը:

Վեհափառ Հայրապետն այցելություն տվեց Կիրովականի քաղաքային սովետին, ուր ընդունվեց քաղաքային սովետի ղեկավար կազմից՝ գլխավորությամբ քաղաքային սովետի նախագահ Շ. Վարդումյանի: Տեղի ունեցավ ջերմ, բարեկամական զրույց և հյուրասիրություն:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը Դիլիջանի և Սևանի վրայով վերադարձավ Մայր Աթոռ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ